6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.

(I) Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հաշվի առնելով, որ Հայցվորի կողմից ներկայացված պահանջը մերժվել է, իսկ Հայցվորը նախապես վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, ուստի դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷԼՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի՝ Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման 2025 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/60-1 պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքն ընդունված համարվելու հիմքով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «ԷԼՍԵ» ՍՊ ընկերությանը իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEDF-E6F2-45B5-8607 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am